

ԿԵՆՏՐՈՆ հեռուստաընկերության ԷՊԻԿԵՆՏՏՐՈՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ծառայության  
թողարկման ընթացքում 2015թ դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի քարոզչության  
համար վճարովի եթերաժամի տրամադրման պայմանների մասին հայտարարության  
տեքստը

Ղեկավարվելով Հանրաքվեի մասին ՀՀ օրենքի 20-րդ և Ընտրական օրենսգրքի 19-րդ  
հոդվածների պահանջներով՝ 2015թ դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի քարոզչությանը  
մասնակցող ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ խմբակցությունների/պատգամավորական խմբերի/  
համար հավասար, ոչ խտրական պայմաններ ապահովելու նպատակով՝ ԿԵՆՏՐՈՆ  
հեռուստաընկերությունը հայտարարում է՝

--- Դեկտեմբերի 6-ին կայանալիք հանրաքվեի քարոզչության ընթացքում ԿԵՆՏՐՈՆ  
հեռուստաընկերությունը վճարովի եթեր է տրամադրում ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ  
խմբակցություններից/պատգամավորական խմբերից/ յուրաքանչյուրին ամեն օր ոչ ավելի, քան  
10 րոպե:

--- Վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը սահմանվում է 18000/տասնութ հազար/ ՀՀ  
դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

--- Քարոզչության մասնակիցների օրական չօգտագործած րոպեները համարվում են  
սպառված և չեն կարող օգտագործվել քարոզչության հաջորդ օրերին:

--- Վճարովի եթերաժամը քարոզչության մասնակիցներին տրամադրվելու է հատուկ  
ՀԱՆՐԱՔՎԵԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԲՆԿԻ շրջանակում  
հեռուստաընկերության սահմանած ժամերին՝ 20:05-21:25 ժամանակահատվածում:

Գլխ. տնօրեն



Գ. Մարտիրոսյան